

Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ԷԱՃԱՊՁԲ-2022/15-4-ԵՊԲՀ»* ծածկագրով

Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԷԱՃԱՊՁԲ-2022/15-4-ԵՊԲՀ-1

ք. Երևան ____/_____/2022թ.

« Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ »-ը ի դեմս Արմեն Աբգարի Մուրադյան ի, որը գործում է « Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ »-ը, ի դեմս տնօրեն Բաբկեն Թադևոսյան ի, որը գործում է « Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները

խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝

պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սևանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 25946120.00 AMD(քսանհինգ միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար հարյուր քսանդրամ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն:^{629^{Ա1}}

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

730^{Ա2}

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են

Ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

-

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

—

8 31^[3]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է Էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:^{9 3⁴¹} Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո

ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գևորգի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.1.1. Մասնակցի կողմից հայտով միևնույն ապրանքի համար մեկից ավել ապրանքային նշան կամ մոդել ներկայացնելու դեպքում, պայմանագրի կատարման փուլում, պայմանագրով սահմանված ողջ խմբաքանակի համար ապրանքի միանվագ և (կամ) փուլային մատակարարումը իրականացվելու է պայմանագրով սահմանված ապրանքային նշաններից կամ մոդելներից միայն մեկով՝ ըստ մատակարարի ընտրության: 8.1.2. Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է: ¹⁵¹:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

11¹⁶¹

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի

առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

—

13¹⁸¹

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան
Հիմնադրամ

ք. Երևան, Կորյունի 2

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

11500166513800

01503448

/ստորագրություն/

Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը
չհակասող դրույթներ:

¹¹²⁹ ⁶ Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա
պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

¹²³⁰ ⁷ Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից:

ՎԱՃԱՌՈՂ

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ

ք.Երևան, Արզումանյան 32-10

Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ

217002182558001

01210095

/ստորագրություն/

Կ.Տ

Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

¹³¹³¹ ⁸ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխադրային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից

¹⁴¹⁹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

¹⁵¹¹⁰ Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

¹⁶¹¹¹ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

¹⁷¹¹² Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

¹⁸¹¹³ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | |
|--------------------------------------|---|-----------------------|--|--|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, արտադրողի անվանումը* | տեխնիկական բնութագիրը |
| 1 | 33691162/16 | 1 Կոմբուր UX, 10 թեսթ | Combur-10-UX 100 Str., Roche Diagnostics | Ուրիսիս 1100 անալիզատորի համար նախատեսված Կոմբուր UX, 10 թեսթ (Combur UX 10 tests): Օրիգինալ: Մեզ մեջ ուրոբիլինոգենի, գլյուկոզի, բիլիռուբինի, կետոնների, տեսակարար կշռի, արյան, pH, սպիտակուցի, նիտրիտների, լեյկոցիտների որոշման թեսթ-ստրիպ: Մեթոդ՝ ինդիկատորի գունավորում: Ֆորմատ՝ 100 ստրիպ սրվակում/հատ: Նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, |

| | | | | |
|---|-----------------|--|--|--|
| | | | | For In Vitro Diagnostic: Կցված է e89ecf51.doc |
| 2 | 33211120/ 1 | 2 Գլյուկոզայի որոշման թեսթ հավաքածու | GLUC HK Gen.3, 800Tests, cobas c, Integra, Roche Diagnostics | Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված գլյուկոզա որոշման թեսթ հավաքածու (Glucose HK large, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 800 թեսթ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: |
| 3 | 33211270/ 1 | 3 Ընդհանուր սպիտակուցի որոշման թեսթ հավաքածու | TP Gen.2,300Tests, cobas c, Integra, Roche Diagnostics | Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված ընդհանուր սպիտակուց որոշման թեսթ հավաքածու (Total Protein Gen.2, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 300 թեսթ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: |
| 4 | 33691159/ 5 | 4 Ալանին ամինոտրանսֆերազի որոշման թեսթ-հավաքածու | ALT, 500Tests, cobas c, Integra, Roche Diagnostics | Կոբաս Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված ալանին ամինոտրանսֆերազայի որոշման թեսթ հավաքածու (ALT, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 500 թեսթ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: |
| 5 | 33691162/ 17 | 5 Կոբաս Ինտեգրա անալիզատորի | cobas Integra Cleaner, Roche Diagnostics | Կոբաս Ինտեգրա անալիզատորի համար մաքրող լուծույթ /Cleaning Solution/ Կոբաս Ինտեգրա անալիզատորի համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 1000 մլ մաքրող լուծույթ/հատ: Նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: |

| | | | | |
|---|-----------------|--|--|---|
| | | համար մաքրող լուծույթ | | Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |
| 6 | 33691173/ 1 | 6 Նորածիլ ների արյան ստ երիլության ն միջավայր աերոբ մա կրոբների որոշման համար | Hemo-aerobic culturing neonatal, Liofilchem | Նորածիլների արյան ստերիլության միջավայր աերոբ մանրէների որոշման համար: Ֆորմատ` 9 մլ միջավայր շշիկում կամ սրվակում/հատ: Նոր է չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 -ի առկայություն: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճան |
| 7 | 33691162/ 18 | 7 Սելկլին | Cellclean 50 ML, Sysmex | XS 1000i և XT 4000i հեմատոլոգիական անալիզատորների համար Սելկլին (Cellclean) մաքրող նյութ: Օրիգինալ: Մեթոդ` Ֆլուրոցենսցիտոմետրիային անալիզ Poch 100i, KX-21 N: Ֆորմատ` 50 մլ Cellclean/հատ: Նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները` սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic: |
| 8 | 33691159/ 6 | 8 Անտիստ րեպտոլիզ ին-Օ որոշման թեստ կասետ | ASLO TQ, 150Tests, cobas c, Roche Diagnostics | Կոբաս U311 անալիզատորի համար նախատեսված անտիստրեպտոլիզին-Օ որոշման թեստ կասետ (ASLO TQ, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ` 150 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ: Նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները` 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: |
| 9 | 33691162/ 9 | 9 Կոբաս | Controlset RF II, | Precicontrol RF ստուգիչ հեղուկ: Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 |

| | | | | |
|----|-----------------|--|--|--|
| | 19 | Ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար Պրեսիկոն տրոլ RF | Roche Diagnostics | անալիզատորների համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ մակարդակ 1՝ 2 x 1մլ, մակարդակ 2՝ 2 x 1մլ/հատ: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: |
| 10 | 33691162/ 20 | 10 Դ- դիմերի կալիբրատոր | D-Dimer Gen.2 Calibrator Set, Roche Diagnostics | Դ-դիմերի կալիբրատոր cobas INTEGRA 400 plus և cobas c311 անալիզատորների համար (D-Dimer Gen.2): Օրիգինալ: Ֆորմատ՝ 6 x 0.5 մլ տուփում/ հատ: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: |
| 11 | 33691162/ 21 | 11 Դ- դիմերի կոնտրոլ | D-Dimer Gen. 2 Control I/II, Roche Diagnostics | Դ-դիմերի կոնտրոլ, cobas INTEGRA 400 plus և cobas c311 անալիզատորների համար (D-Dimer Gen2 control I/II): Օրիգինալ: Ֆորմատ՝ 2 x 2 x 1 մլ/ հատ: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: |
| 12 | 33691162/ 22 | 12 Դ- դիմերի որոշման թեստ հավաքածու | D-Dimer Gen.2, 100Test, cobas c Integra, Roche Diagnostics | Դ-դիմերի որոշման թեստ հավաքածու cobas INTEGRA 400 plus և cobas c311 անալիզատորների համար (Tina-quant D-Dimer Gen.2): Օրիգինալ: Ֆորմատ՝ 100 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան պլազմա: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only |
| 13 | 33691162/ 23 | 13 NaOH-D լվացող լուծույթ | NaOH-D/Basic Wash 2x1.8 L, Roche Diagnostics | ԿոբասU311 անալիզատորի համար NaOH-D լվացող լուծույթ հիմնային բնույթի (դետերգենտ 1): Օրիգինալ: Ֆորմատ՝ 2x1.8լ/հատ: Պահպանման պայմանները սենյակային |

| | | | | |
|----|-------------|--|--|---|
| | | հիմնային բնույթի (դետերգենտ 1) | | ջերմաստիճան: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only: |
| 14 | 33691162/24 | 14 Էլեկսիս Պրոստատ սպեցիֆիկ հակազենիքանակական որոշման թեստ-հավաքածու | Total PSA Elecsys cobas e 100 V3, Roche Diagnostics | Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Էլեկսիս Պրոստատ սպեցիֆիկ հակազեն (Elecsys PSA): Օրիգինալ: Մեթոդ՝ Էլեկտրոխիմիալ միկրոէնզիմատիկ անալիզ: Ֆորմատ՝ 100 որոշում տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic: |
| 15 | 33691159/7 | 15 Եռգլիցերիդների որոշման թեստ հավաքածու | TRIGL, 250Tests, cobas c, Integra, Roche Diagnostics | Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորների համար նախատեսված եռգլիցերիդների որոշման թեստ հավաքածու (Triglycerides, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 250 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: |
| 16 | 33691159/8 | 16 Մագնեզիումի որոշման թեստ հավաքածու | MG Gen.2, 250Tests, cobas c, Roche Diagnostics | Կոբաս U311 անալիզատորի համար նախատեսված մագնեզիում որոշման թեստ հավաքածու (Magnesium, cobas Integra, cobas c): Օրիգինալ: Ֆորմատ՝ 250 թեստ տուփում/հատ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ 15-25°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only: |
| 17 | 33691162/ | 17 Լվացող | Acid wash Solution 2x1.8 L, | Կոբաս U311 անալիզատորի համար լվացող լուծույթ թթվային |

| | | | | |
|----|-----------------|--|--|--|
| | 25 | լուծույթ թթվային բնույթի (դե- տերգենտ 2) | Roche Diagnostics | բնույթի (դետերգենտ2): Օրիգինալ: Ֆորմատ` 2x1.8լ/հատ: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճան: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only: |
| 18 | 33691162/ 26 | 18 b221 Կոնտրոլ մ ակարդակ 1/ COMBIT ROL Plus B L1 | COMBITROL PLUS B, Level 1, Roche Diagnostics | Կոնտրոլ մակարդակ 1 / COMBITROL Plus B L1/ նախատեսված Կոբաս b221 վերլուծիչի համար, IVD: Օրիգինալ: Ֆորմատ` 30 սրվակ տուփում/հատ: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճան: |
| 19 | 33691162/ 27 | 19 b221 Կոնտրոլ մ ակարդակ 2/ COMBIT ROL Plus B L2 | COMBITROL PLUS B, Level 2, Roche Diagnostics | Կոնտրոլ մակարդակ 2/ COMBITROL Plus B L2/ նախատեսված Կոբաս b221 վերլուծիչի համար, IVD: Օրիգինալ: Ֆորմատ` 30 սրվակ տուփում/հատ: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճան: |
| 20 | 33691162/ 28 | 20 b221 Կոնտրոլ մ ակարդակ 3/ COMBIT ROL Plus B L3 | COMBITROL PLUS B, Level 3, Roche Diagnostics | Կոնտրոլ մակարդակ 3/ COMBITROL Plus B L3/ նախատեսված Կոբաս b221 վերլուծիչի համար, IVD: Օրիգինալ: Ֆորմատ` 30 սրվակ տուփում/հատ: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճան: |
| 22 | 33691162/ 30 | 22 Էլեկսիս Ֆերիտին քանակակ ան որոշման թ եստ-հավա | Ferritin Gen. 2 Elecsys, cobas e, Roche Diagnostics | Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Էլեկսիս Ֆերիտին (Elecsys Ferritin) քանակական որոշման թեստ-հավաքածու: Օրիգինալ: Մեթոդ` Էլեկտրոխիմիալ միկրոսկոպիային անալիզ: Ֆորմատ` 100 որոշում տուփում/հատ: Ստուգվող նմուշ` արյան շիճուկ/պլազմա: Նոր E, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները` 2-8°C |

| | | | | |
|----|-------------|--|--|--|
| | | քաճու | | ջերմաստիճանում. Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic: |
